Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի

«26» հունիսի 2023 թ. թիվ 184 նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

Ա. Սարգսյան

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ԼՐԻՎ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ՁԵՂՉԻ) ԵՎ ՓՈԽԱՏԵՂՄԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետ՝ ԳԿՄԿ) ուսանողներին համապատասխան ուսուցման ձևերով (առկա, հեռակա, հեռավար) ուսման վճարի փոխհատուցման (լրիվ կամ մասնակի (զեղչ), նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման չափերի և պայմանների, ինչպես նաև փոխատեղման՝ վճարովի համակարգից անվճար և հակառակը տեղափոխվելու կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության օրենքները, կառավարության որոշումները, Հայաստանի Հանրապետության ԿԳՄՍ նախարարի հրամանները, ԳԿՄԿ կանոնադրությունը:

3. Ուսանողական վարձը լրիվ կամ մասնակի փոխհատուցվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների կամ ԳԿՄԿ ֆինանսական միջոցների հաշվին:

4. Ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման՝ լրիվ կամ մասնակի զեղչի, ինչպես նաև ուսանողների փոխատեղման վերաբերյալ որոշումներ կայացնելու համար ՀՀ ԳԿՄԿ տնօրենի հրամանով ձևավորվում է Մանդատային հանձնաժողով: Մանդատային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ԳԿՄԿ դեկանը, ԳԿՄԿ ուսումնական մասի պետը, դեկանատի գլխավոր մասնագետը, իրավախորհրդատուն, ֆինանսիստը և ԳԿՄԿ ուսանողական խորհրդի ներկայացուցիչը:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով, մրցութային հիմունքներով, ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է՝

5.1. մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատական ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով: Մասնավորապես՝

ա) առաջին կուրսում նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում ընդունված ուսանողներին:

բ) մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով հաջորդ կուրս փոխադրված առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին:

գ) թափուր տեղեր առաջանալու դեպքում նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցումը կարող է տրամադրվել տվյալ մասնագիտության այլ կրթական ծրագրերի ուսանողներին:

դ) սույն ենթակետի «բ» և «գ» պարբերությունների պահանջները տարածվում են նաև վճարովի համակարգում սովորող՝ Լեռնային Ղարաբաղի և Վրաստանի Սամցխե-Ջավախք ու Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված և բնակվող հայազգի, Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած հայազգի ուսանողների, ինչպես նաև հայազգի այն օտարերկրյա ուսանողների նկատմամբ, որոնց մշտական բնակության օտարերկրյա պետությունում ստեղծվել է քաղաքացիների կյանքին կամ առողջությանը սպառնացող արտակարգ իրավիճակ:

5.2. օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերում ընդգրկված անձանց.

ա) «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձանց,

բ) 1-ին, 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող և հաշմանդամ երեխա ճանաչված անձանց, ֆունկցիոնալության ծանր և խորը, իսկ երեխաների դեպքում նաև միջին աստիճանի սահմանափակում ունեցող անձանց՝ համաձայն «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

գ) ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին՝ համաձայն Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի,

դ) զոհված (մահացած) զինծառայողների ծնողներին, ամուսնուն (կնոջը), մինչև 27 տարեկան զավակներին՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

5.3 պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին, ընդ որում, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով կարող են սահմանվել նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողների ուսման վճարի փոխհատուցման այլ պայմաններ:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխ-հատուցում, ըստ առաջադիմության, տրամադրվում է՝

ա) ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողներին՝ սույն կարգի 7-րդ և 8-րդ կետերին համապատասխան.

բ) սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերում հաշվառված և վերջին հինգ տարում մշտապես բնակվող ու տվյալ համայնքի հանրակրթական (միջնակարգ կամ ավագ դպրոց), նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր

իրականացնող ուսումնական հաստատություններն ավարտած ուսանողներին[1]՝ սույն կարգի 8-րդ կետին համապատասխան:

գ) մարտական գործողություններին մասնակցած ուսանողներին՝ սույն կարգի 8-րդ կետին համապատասխան:

7. Ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող հետևյալ խմբերին՝

ա) մինչև 5,00 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 50 տոկոսի չափով,

բ) 5,01-10,00 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 60 տոկոսի չափով,

գ) 10,01-15,00 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 70 տոկոսի չափով,

դ) 15,01-20,00 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 80 տոկոսի չափով,

ե) 20,01-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 90 տոկոսի չափով:

Ընդ որում՝ առաջին կուրսում նախորդ կրթական աստիճանի ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 60 տոկոսի, իսկ հաջորդ կուրսերում՝ ՄՈԳ-ի առավելագույն արժեքի առնվազն 70 տոկոսի շեմն ապահովելու դեպքում:

7.1. Սույն կարգի 7-րդ կետով սահմանված փոխհատուցում ստանալու համար ուսանողն իր ընտանիքի անապահովության միավորի վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի տրամադրած տեղեկանքը ԳԿՄԿ-ին է ներկայացնում յուրաքանչյուր կիսամյակ:

8. Սույն կարգի 6-րդ կետի բ, գ ենթակետերով սահմանված ուսանողների խմբերին փոխհատուցում տրամադրվում է՝

---

[1] *Տես՝ ՀՀ կառավարության 12/02/2021 թ.N 184-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներին տրվող սոցիալական աջակցության փոխհատուցման ենթակա ծավալները և փոխհատուցման կարգը սահմանելու մասին*

8.1. առաջին կուրս ընդունված ուսանողներին՝ նախորդ կրթական աստիճանի ՄՈԳ-ի 60 տոկոսը հաղթահարելու դեպքում՝՝ տարեկան ուսման վճարի 50 տոկոսի չափով.

8.2. հաջորդ կուրսերում՝

ա) նախորդ ուսումնական տարվա արդյունքներով ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 60,00-70,99 տոկոս ունեցող ուսանողներին՝ տարեկան ուսման վճարի 50 տոկոսի չափով:

բ) նախորդ ուսումնական տարվա արդյունքներով ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 71,00-79,99 տոկոս ունեցող ուսանողներին՝ տարեկան ուսման վճարի 60 տոկոսի չափով:

գ) նախորդ ուսումնական տարվա արդյունքներով ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 80,00 տոկոս և բարձր ՄՈԳ ունեցող ուսանողներին՝ տարեկան ուսման վճարի 70 տոկոսի չափով:

9. ԳԿՄԿ-ը վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին, ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով իր միջոցների հաշվին իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին.

9.1. 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին՝ 50 տոկոս:

9.2. Մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ 50 տոկոս:

9.3. Երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 30 տոկոս:

9.4. 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ ծնող ունեցող ուսանողներին՝ 30 տոկոս:

9.5. Մարտական հերթապահություն իրականացանող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին՝ 30 տոկոս:

9.6. Մարտական գործողությունների մասնակիցների ուսանող ծնողներին, զավակներին, ինչպես նաև մարտական գործողությունների մասնակիցների ամուսին, կին կարգավիճակ ունեցող ուսանողներին՝ 30 տոկոս:

9.7. Մարտական գործողություններին մասնակից ուսանողներին՝ անկախ ՄՈԳ-ի սահմանված շեմից՝ 30 տոկոս:

9.8. Սոցիալապես անապահով (ընտանիքների ապահովության գնահատման համակարգում հաշվառված) ուսանողներին՝ 20 տոկոս:

9.9. Սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերի ուսանողներին՝ 20 տոկոս:

9.10. Ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված, երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, որոնք ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0.1 միավոր տարբերության պատճառով, 50 տոկոս:

9.11. ԳԿՄԿ աշխատակազմում հիմնական աշխատանքային պայմանագրով աշխատողուսանողներին, նրանց ուսանող զավակներին, ինչպես նաև ընտանիքի անդամ հանդիսացող աշխատողի ամուսնուն (կնոջը)՝ 50 տոկոս:

9.12. ՀՀ ԳԱԱ համակարգում առնվազն մեկ տարի հիմնական աշխատանքային պայմանագրով աշխատող ուսանողներին և նրանց ուսանող զավակներին՝ 30 տոկոս:

9.13. Առանձնահատուկ դեպքերում՝ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին՝ Մանդատային հանձնաժողովի որոշմամբ:

10. Սույն կարգով սահմանված ուսման վճարի մասնակի փոխհատուցման մի քանի արտոնության հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է ուսման վճարի մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:

11. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցումից ուսանողը կարող է օգտվել սահմանված ՄՈԳ-ի շեմը հաղթահարելու դեպքում: Անբավարար գնահատական (չստուգված) ստանալու կամ անհարգելի պատճառով քննությանը (ստուգարքին) չներկայանալու դեպքերում

ուսանողները ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից չեն օգտվում:

12. Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար ՄՈԳ-ի շեմը սահմանվում է ԳԿՄԿ տնօրենի հրամանով՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին՝ մինչև սեպտեմբերի 1-ը:

13. Ուսման վարձավճարի փոխհատուցման վերաբերյալ դիմումներն ընդունվում են.

1) առկա կամ հեռավար ուսուցման դեպքում՝ տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին հաջորդող չորս շաբաթների ընթացքում.

2) հեռակա ուսուցման դեպքում՝ տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքների սկզբին նախորդող և հաջորդող մեկական շաբաթների ընթացքում:

Սահմանված ժամկետների ավարտից հետո ներկայացված դիմումները ենթակա չեն քննարկման:

14. Ուսումնառության վճարովի համակարգերում սովորող ուսանողները ԳԿՄԿ կողմից տրամադրվող ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից օգտվում են ուսումնառության երկրորդ կիսամյակից՝ ամբողջ ուսումնական տարվա համար:

ՓՈԽԱՏԵՂՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

15. ԳԿՄԿ-ում ուսումնական տարին սկսելուն նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում իրականացվում է փոխատեղում՝ ըստ մասնագիտությունների:

Փոխատեղման արդյունքում անվճար համակարգում ընդգրկված, սակայն նախորդ ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն չցուցաբերած ուսանողներն ընդգրկվում են վճարովի համակարգ, իսկ վճարովի համակարգի բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները՝ անվճար ուսուցման համակարգ: ԳԿՄԿ

տնօրենի կողմից հրապարակվում է անվճար և վճարովի համակարգ անցած ուսանողների ցանկը և պատշաճ կերպով տեղեկացվում է ուսանողներին:

16. Սույն կարգի 5.1-րդ կետի համաձայն տրամադրվող ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունքից հրաժարվելու վերաբերյալ դիմումները Մանդատային հանձնաժողովն ընդունում է մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ը:

17. Հարգելի պատճառով (ակադեմիական արձակուրդի, առողջական վիճակի, զինծառայության մեկնելու կամ ուսանողական փոխանակման ծրագրերով արտասահման ուսումնառության գործուղվելու կապակցությամբ, ինչպես նաև իր դիմումի համաձայն) ուսումնառությունն ընդհատած ուսանողը ուսանողական իրավունքները վերականգնելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը:

Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունքից օգտվող ուսանողի կողմից հարգելի պատճառով ուսումնառությունն ընդհատելու դեպքում ազատված ուսանողական նպաստը նույն կուրսում տվյալ ուսումնական տարում չի օգտագործվում և հետագայում ավելացվում է այն կուրսի տվյալ ուսումնական տարվա ուսանողական նպաստներին, որտեղ ուսանողը վերականգնում է իր ուսանողական իրավունքները:

18. Այլ պատճառներով ուսումնառությունն ընդհատած, այլ բուհերից, ԳԿՄԿ այլ մասնագիտություններից կամ հեռակա ուսումնառության համակարգից առկա, կամ առկա ուսումնառության համակարգից հեռակա ուսումնառության համակարգ տեղափոխված ուսանողները, ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել ԳԿՄԿ-ում տվյալ մասնագիտությունում, առկա ուսուցման համակարգում մեկ ուսումնական տարի սովորելուց հետո, իսկ ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից առկա և հեռակա ուսումնառության համակարգում մեկ կիսամյակ սովորելուց հետո:

19. Սույն կարգի 9.10 ենթակետում սահմանված կարգով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն առկա ուսուցմամբ ընդունված ուսանողները:

20. Սույն կարգի 5.1 ենթակետում նշված ուսանողների համար մրցույթը կազմակերպվում է մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը, նախորդող ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի համար սահմանված ժամանակահատվածում հանձնած քննությունների և ստուգարքների արդյունքների ՄՈԳ-ի հիման վրա: ՄՈԳ-ը հաշվարկվում է ԳԿՄԿ-ում գործող գիտելիքների գնահատման սանդղակի կիրառմամբ (հարյուրերորդականի ճշտությամբ): Հավասար ցուցանիշների դեպքում միավորները հաշվարկվում են առանց կլորացման: Ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման համար անցկացվող մրցույթին չեն կարող մասնակցել ակադեմիական պարտքերով քննաշրջանը ավարտած մագիստրանտները: Ըստ առաջադիմության՝ ՄՈԳ-ի, ձևավորվում է տվյալ կուրսի տվյալ մասնագիտության ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակը:

21. Փոխատեղման ժամանակ առաջադիմության արդյունքների հավասար միավորների դեպքում առաջնահերթությունը տրվում է՝

ա) պետական կրթական չափորոշիչով հաստատված ընդհանուր և հատուկ մասնագիտական առարկաներից առավել բարձր միավոր ստացած ուսանողներին.

բ) նախորդ տարում անվճար համակարգում սովորող ուսանողներին.

գ) քիչ բացակայություններ ունեցող ուսանողներին.

դ) սոցիալապես առավել անապահով վիճակում գտնվող ուսանողներին՝ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում.

ե) զինվորական ծառայությունից զորացրված ուսանողներին:

22. Սույն կարգի 20-րդ կետում նշված ցուցակը ԳԿՄԿ դեկանի կողմից ներկայացվում է Մանդատային հանձնաժողովի քննարկմանը:

23. Մանդատային հանձնաժողովը, ըստ տվյալ կուրսի տվյալ մասնագիտությանը հատկացված նպաստների թվաքանակի, իրականացնում է մրցույթ և կազմում է ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակը: Կազմվում է արձանագրություն (2 օրինակից), որտեղ պարտադիր կարգով գրանցվում են Մանդատային հանձնաժողովի անդամների կողմից արտահայտված կարծիքները և

հնարավոր վերապահումները: Արձանագրությունը և մրցութային ցուցակը ստորագրվում են Մանդատային հանձնաժողովի նախագահի և անդամների կողմից:

24. Սույն կարգի 23-րդ կետում նշված ցուցակը և արձանագրությունները մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը դեկանի կողմից ներկայացվում են ՀՀ ԳԿՄԿ գիտական խորհրդի դիտարկմանը և հաստատմանը:

25. Մանդատային հանձնաժողովի կողմից հաստատված ցուցակները հրապարակվում են մեկօրյա ժամկետում: Ցուցակի վերաբերյալ դիմում-բողոքները երեք աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացվեն ԳԿՄԿ գիտական խորհրդին: ԳԿՄԿ գիտական խորհուրդը քննարկում է ներկայացված դիմում-բողոքները (եթե այդպիսիք կան), հաստատում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների վերջնական ցուցակները և այն հրամանագրման նպատակով ներկայացնում է ԳԿՄԿ տնօրենին:

26. ԳԿՄԿ տնօրենի հրամանով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների հրամանագրումից հետո ուսանողների այլ ուսումնական հաստատություն կամ այլ ամբիոն փոխադրվելու, ինչպես նաև Կենտրոնից ազատվելու դեպքերում ազատված ուսանողական նպաստներն այլ ուսանողների չեն տրամադրվում:

27. ԳԿՄԿ տնօրենի հրամանում պարտադիր կարգով նշվում է ուսանողական նպաստի տրամադրման ժամկետը՝ տվյալ տարվա սեպտեմբերի 1-ից մինչև հաջորդ տարվա օգոստոսի 31-ը: